Ի. ԲԱՑՈՒ

ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 32-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

1952 թվականի ապրիլի 28-ին Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի նիստը, նվիրված Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին։

Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Արդար Հովհաննիսյանի ներածական խոսքից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Սովետական կարգերի հաղթանակն Ադրբեջանում։ Զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մ. Հակոբյան։

2. Սովետական Ադրբեջանի տնտեսության և կուլտուրայի ծաղկումը 32 տարվա ընթացքում։ Զեկուցող՝ տնտեսական գիտությունների թեկնածու Գ. Ն. Սահակյան։

3. Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության արտացոլումը ադրբեջանական սովետական դրականության մեջ։ Զեկուցող՝ Ա. Հ. Սուլեյմանով։

Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին նվիրված գիտական սեսիային մասնակցեցին Ադրբեջանի և Վրաստանի Գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները։

Սեսիայում կարդացված զեկուցումները կտպագրվեն «Տեղեկագրի» հերթական համարներում։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ, ՆՎԻՐՎԱԾ ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻԻ ԾՆՆԴՅԱՆ 500 ԱՄՅԱԿԻՆ

1952 թ. ապրիլի 28-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված իտալական մեծ նկարիչ և գիտնական Լեոնարդո Դա Վինչիի ծննդյան 500-ամյակին։

Նիստը բացվեց Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի ներածական խոսքով, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները.

1. Լեոնարդո Դա Վինչիի կյանքը և գործունեությունը (զեկուցող՝ արվեստագիտության թեկնածու Մ. Ս. Սարգսյան)։ 2. Լեոնարդո Դա Վինչիի մեխանիկան (զեկուցող՝ ԳԱ իսկական անդամ Ն. Խ. Հարությունյան)։ 3. Լեոնարդո դա Վինչին և հայ կուլտուրան (զեկուցող՝ պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. Պարսամյան)։ 4. Լեոնարդո Դա Վինչին և նրա բժշկական հայացքները (զեկուցող՝ բժշկական գիտ. թեկնածու Գ. Հարությունյան)։

Լեոնարդո Դա Վինչիի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածը կտպագրվի «Տեղեկագրի» հաջորդ համարում։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ